ԴԾ-ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 2018

<<Հաստատում եմ>>
“Շիրակացու ճեմարան” միջազգ, գիտակրթ. համալիրի
Տնօրեն՝_____Աշոտ Ալիխանյան
<< >> 2018Թ.

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ակադեմիական ազնվության քաղաքականություն

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը ազգային հենքի վրա համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորականի և քաղաքացու ձևավորումն է, որը բոլոր իրավիճակներում դրսևորում է սկզբունքայնություն և հանդես է գալիս որպես արդարության և ազնվության կողմնակից ու պաշտպան:

Ակադեմիական ազնվությունը որոշակի արժեքների և կարողությունների ամբողջություն է. այն նպաստում է, որ յուրաքանչյուր անձ լինի առավել ազնիվ ու օրինապահ և շարունակաբար զարգացնի այդ որակները:

Ճեմարանում ակադեմիական ազնվության մթնոլորտ ստեղծելն ու պահպանելը ողջ դպրոցական համայնքի պարտականությունն են:

Փաստաթղթի նպատակը

- ստեղծել ազնվության և անաչառության մթնոլորտ, բացառել ցանկացած անազնիվ

վարքագիծ՝ խթանելով սովորողի նկարագրի դրական որակների զարգացումը. ձևավորել սկզբունքային, մտածող, հետազոտող, բանիմաց և լայնախոհ անհատներ, որոնք կարողանում են համարձակորեն արտահայտել իրենց մտքերը և հարգանքով են վերաբերվում այլ մարդկանց և նրանց ստեղծած արժեքներին.

- նպաստել կրթության որակի և դասավանդման արդյունավետության բարձրացմանը.
- ձևակերպել ակադեմիական ազնվությանը նպաստող պահանջներ և ապահովել դրանց իրականացման անհրաժեշտ պայմանները.
- կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները և կանոնակարգել դրանց հետ կապված խնդիրները:

Ակադեմիական անազնիվ վարքագիծ է համարվում.

- *գրագողությունը.* երբ առանց հղումներ կատարելու օգտագործվում են այլ մարդկանց մտքերը, կարծիքները՝ դրանք ներկայացնելով որպես սեփական մտքի արգասիք.
- *գաղտնի համաձայնությունը*. երբ սովորողները համաձայնության են գալիս մեկի աշխատանքը որպես մյուսի աշխատանք գնահատման ներկայացնելու վերաբերյալ.
- *աշխատանքի կրկնօրինակումը*. նույն աշխատանքը տարբեր գնահատումների են ներկայացնում.
- *Վարքային ցանկացած այլ դրսևորում*, որը հանգեցնում է թեկնածուի կամ այլ թեկնածուների ցույց տված արդյունքերի խեղաթյուրման (օրինակ՝ չթույլատրվող պարագաների մուտքը քննասենյակ, քննության ընթացքում անթույլատրելի վարքի դրսևորում, CAS գրառումների կեղծում) (Diploma Programme Academic Honesty, 2011)
- *տեղեկատվության հրապարակումը*. քննական նյութերի դուրս բերում քննասենյակից, գնահատման գործընթացի մանրամասների հրապարակում և տարածում.
- Քննության ավարտից հետո 24 ժամվա ընթացքում տեղեկատվության փոխանցումը և/կամ ստացումը այլ ուսանողներից:
- *արգելված միջոցների կիրառումը*. քննությունների ընթացքում անթույլատրելի միջոցների, սարքերի, գրականության օգտագործում և փոխանցում.
- *հուշարարությունը.* ուրիշներին օգնելու նպատակով արտագրության հանդուրժում կամ դրան նպաստող քայլերի իրականացում.
- *վստահության չարաշահումը*. ներկայացնում են սխալ և ոչ ճշգրիտ աղբյուրներ, դասընկերներից և մեծահասակներից արգելված օգնություն ստանալու միտում են դրսևորում.
- *Տվյալների կեղծում*. փորձերի, մաթեմատիկական հետազոտության / նախագծման համար ներկայացնում են կեղծ տվյալներ
- *ՄԲԴԾ քննության վարքականոնի խախտում*. քննությունների անցկացման վերաբերյալ ՄԲ-ի կողմից հրապարակված դրույթների/կարգերի խախտում կամ անտեսում:

Ակադեմիական ազնվությունը խախտելու դեպքում.

ա. Առաջին միջադեպ

Սովորողի աշխատանքը գնահատվում է "0"՝ առանց վերահանձման հնարավորության: Առարկայի ուսուցչի կողմից ավագ դպրոցի տնօրենին և ԴԾ համակարգողին ներկայացվում է միջադեպը նկարագրող և փաստող ծանուցագիր: Սովորողը պարտավորվում է ներկայացնել գրավոր բացատրագիր: Խմբի մանկավարժը տվյալ միջադեպը գրավոր ներկայացնում է սանի ծնողներին: Միջադեպը արձանագրվում է սովորողի հաշվետվության թերթիկում:

բ. Երկրորդ միջադեպ

Սովորողի աշխատանքը գնահատվում է "0"՝ առանց վերահանձման հնարավորության: Առաջին միջադեպի համար նախատեսված գործողությունների հետ մեկտեղ, սովորողը 2 օրով հեռացվում է դասերից: Բացակայության ընթացքում անցկացված աշխատանքների համար նշանակվում է "0": Ավագ դպրոցի տնօրենի կողմից կազմակերպվում է հանդիպում հետևյալ անձնակազմով. սովորող, ծնող, խախտումը արձանագրող ուսուցիչ, խմբի մանկավարժ, հոգեբան, ԴԾ համակարգող:

գ. Երրորդ միջադեպ

Սովորողի աշխատանքը գնահատվում է "0"՝ առանց վերահանձման հնարավորության: Սովորողի ուսումնառությունը անժամկետ կասեցվում է մինչև կարգապահական խորհրդի կողմից սովորողի հեռացման հարցի քննարկումը և որոշման կայացումը: Բացակայության ընթացքում բոլոր նշանակված աշխատանքները գնահատվում են "0": Արտաքին գնահատման քննությունների ընթացքում ակադեմիական ազնվության որևէ խախտում արձանագրելու դեպքում դպրոցը ի լրումն վերոնշյալ դրույթների պարտավորվում է արտաքին կազմապերպությանը ծանուցել միջադեպի մասին: Արդյունքում սովորողը որպես կանոն հեռացվում է դպրոցից:

Դպրոցի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- մշակել և հաստատել ակադեմիական ազնվության քաղաքականության փաստաթուղթը
- ապահովել փաստաթղթի հասանելիությունը ճեմարանի հանրությանը. դպրոցական համայնքին տեղեկացնել ակադեմիական ազնվության փաստաթղթի դրույթները.
- ապահովել փաստաթղթի համապատասխանելիությունը ՄԲ պահանջներին՝ պարբերաբար կազմակերպելով քաղաքականության վերանայում.

- ակադեմիական ազնվության վերաբերյալ դպրոցական համայնքի (սովորողներ, ուսուցիչներ, ծնողներ) հետ պարբերաբար կազմակերպել սեմինարներ և քննարկումներ.
- ԴԾ ուսուցիչների հետ համաձայնեցնել սովորողների գնահատվող առաջադրանքների ներկայացման վերջնաժամկետների օրացույցը.
- ԴԾ ուսուցիչներին և սովորողներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն քննությունների կանոնակարգի վերաբերյալ.
- կազմել հանձնարարությունների կատարման օրացույց
- ձևակերպել ակադեմիկան ազնվության դրույթները, տալ դրանց պահպանման երաշխիքներ.
- ստեղծել ակադեմիական ազնվության պահպանմանը նպաստող մթնոլորտ, սովորողի նկարագրի որակական զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքում պարբերաբար հղում անել ակադեմիական ազնվության բովանդակությանը.
- յուրաքանչյուր քննությունից առաջ սովորողներին և ուուցիչներին տեղեկացնել թույլատրելի պարագաների ցանկի մասին (հաշվիչներ, բանաձևեր, գրքեր և այլն).
- կարևորել գրադարանավարի դերը ակադեմիական ազնվության ձևավորման գործընթացում.
- մշակել ակադեմիական անազնվության դրսևորումները կանոնակարգող կարգ.
- ապահովել ակադեմիական ազնվության ստուգումն ապահովող ծրագրային փաթեթը (“Turnitin.com”) և վերահսկել դրա կիրառությունը:

Ուսուցչի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի ստեղծման, մշակման և վերանայման գործընթացին.
- սովորողներին ցույց տալ խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, հետազոտություններ անելու և տեղեկատվական գրագիտության հմտություններ ձեռք բերելու կարևորությունը.
- սովորողներին բացատրել ակադեմիական ազնվության պահպանման կարգը և դրանց պահպանման համար մշակել որոշակի կարողություններ.

- հանձնարարությունների համար սահմանել հստակ պահանջներ և սովորողներին տալ հստակ ցուցումներ օգտագործված աղբյուրները, հղումները ճիշտ կատարելու վերաբերյալ:
- նախքան ՄԲ գրասենյակ ուղարկելը՝ կարդալ բոլոր վերջնական աշխատանքները, ինչպես նաև ստուգել դրանց իսկությունը.
- սովորողներին սովորեցնել ձևակերպել և արտահայտել այլոց և սեփական մտքերը:
- սովորողների հետ զրուցել գրագողության մասին
- գնահատվող յուրաքանչյուր առաջադրանքից առաջ սովորողներին տեղեկացնել էլեկտրոնային թույլատրելի սարքավորումների, բանաձևերի և գրքերի ցանկի մասին.
- հետևողականություն դրսևորել ակադեմիական անազնվության դրսևորումների բացահայտման հանդեպ.
- մասնակցել ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներին, դասընթացներին.
- սովորողներից պահանջել կիրառել ակադեմիկան ազնվությունը ստուգող ծրագիրը (Turnitin): Ուսուցիչներից պահանջվում է օգտվել Turnitin- ից ՄԲ գրասենյակ ուղարկվող հիմնական առաջադրանքների ստուգման ժամանակ:
- ծառայել որպես ակադեմիական ազնվության վարքագծի դրսևորման օրինակ և ստորագրել ակադեմիական ազնվության երաշխավորագիրը/խոստումը.

Սովորողների դերը ակադեմիական ազնվության ապահովման գործում

- իմանալ ակադեմիական ազնվության քաղաքականության դրույթները.
- իրազեկ լինել, հարգանք դրսևորել և կատարել այլ մարդկանց մտավոր սեփականությանը առնչվող հիմնարար պահանջները, ցանկացած աշխատանք կատարելիս ընդունել և խստորեն հետևել էթիկայի չափանիշներին: Աղբյուրները կարող են ներառել գրավոր տեքստեր, տեսողական, աուդիո, գրաֆիկա, գեղարվեստական, նամակներ, դասախոսություններ, հարցազրույցներ, հեռարձակումներ, քարտեզներ: Մտավոր սեփականություն են արտոնագրերը, ապրանքանիշը, բարոյական իրավունքը, հեղինակային իրավունքները:
- պատշաճ կերպով հղումներ կատարել: Ծիրակացու ճեմարանը ընդունել է մեջբերման MLA ոճը:
- աշխատանքի վերջում պարտադիր ունենալ մատենագրության ցանկ, որտեղ պիտի նշված լինեն տեղեկատվական բոլոր աղբյուրները.

- յուրաքանչյուր քննությունից առաջ տեղեկանալ տպագիր և էլեկտրոնային գրականության, սարքավորումների, բանաձևերի թույլատրելի ցանկի մասին.
- պահապանել սահմանված բոլոր ներդպրոցական վերջնաժամկետները.
- ուսուցչի և/կամ ԴԾ համակարգողի պահանջով ներբեռնել սեփական աշխատանքը Turnitin համակարգ:
- պատասխանատու լինել արտաքին գնահատման համար ներկայացրած բոլոր աշխատանքների վավերականության և տվյալ աշխատանքներում օգտագործված բոլոր աղբյուրների ճիշտ հղումներ կատարելու համար:
- նախքան աշխատանքի ՄԲ գրասենյակ ներկայացնելը՝ ստորագրել աշխատանքի հավաստիության հռչակագրի ձևաթուղթը (Declaration of authenticity). ներկայացված աշխատանքը պետք է լինի ուսանողի սեփական աշխատանքը
- քննությունների ընթացքում դրսևորել պատշաճ վարքագիծ
- իրազեկ լինել ակադեմիական անազնվության դրսևորման արդյունքում պատասխանատվության կրելու մասին.
- ստորագրել ակադեմիական ազնվության երաշխավորագիրը/խոստումը
- աշակերտական խորհրդի կազմում մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի վերանայման գործընթացին:

Ծնողի դերը ակադեմիական ազնվության ապահովման գործում

- տեղյակ լինել ակադեմիական ազնվության փաստաթղթին.
- խրախուսել երեխաներին ակադեմիական ազնվություն դրսևորելիս
- մասնակցել ակադեմիական ազնվությանն առնչվող քննարկումներին և ակադեմիական ազնվության քաղաքականության փաստաթղթի վերանայման գործընթացին:
- քաջալերել երեխաներին ակադեմիական ազնիվ վարքագիծ դրսևորելու հարցում
- աջակցել դպրոցի անձնակազմին ակադեմիական ազնվության կարևորությունը երեխային բացատրելու հարցում.
- ստորագրել ակադեմիական ազնվության երաշխավորագիրը/խոստումը

- համագործակցել դպրոցի հետ, եթե իր երեխան մեղավոր է այս կամ այն ակադեմիական անազնիվ վարքագիծ դրսևորելու դեպքում:

Կազմակերպական աշխատանք

- ակադեմիական ազնվության քաղաքականության փաստաթուղթը տեղադրվում է ճեմարանի կայքում և հասանելի է ողջ համայնքին.
- դպրոցական ողջ համայնքը պատասխանատու է ակադեմիական ազնվության քաղաքականության իրականացման համար.
- ակադեմիական ազնվության քաղաքականությունը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում: Քննարկումը իրականացնում է ճեմարանական համայնքը (ուսուցչական, ծնողական և աշակերտական), իսկ փաստաթուղթը հաստատվում է տնօրենության խորհրդի նիստում:

“ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ”ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ակադեմիական ազնվությունը պահպանելու խոստում

Ես, (անուն ազգանուն), _____ս, ընթերցել, հասկացել և համաձայն եմ պահպանելու Շիրակացու Ճեմարանի ակադեմիական ազնվության քաղաքականություն դրույթները:

Ես գիտակցում եմ, որ այս կանոնակարգի ցանկացած դրույթ խախտելու դեպքում կվտանգվի իմ ապագա ուսումնառությունը Միջազգային Բակալավրիատի դիպլոմային ծրագրում, կազդի իմ՝ որպես Միջազգային Բակալավրիատի սովորողի որակական նկարագրի վրա և համաձայն ՄԲԴԾ համակարգողի և ավագ դպրոցի տնօրենի զեկուցագրի՝ կարող է պատճառ հանդիսանալ Միջազգային Բակալավրիատի Դիպլոմային ծրագրից ինձ վտարելու համար:

Ավարտական տարի_____

_____

Ստորագրություն:_____

Սան

_____

Ստորագրություն:_____

Ծնող կամ խնամակալ

Ամսաթիվ:_____